ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՄ-08

ք. Երևան «09» մարտի 2026թ.

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս ղեկավար Տիգրան Պետրոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, **«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ն** ի դեմս տնօրենի պ/կ Արման Գևորգյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, և Վարչապետի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արմենակ Խաչատրյանի (այսուհետ՝ Վճարող) (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով **«Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը** (այսուհետ՝ Որոշում), բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի, 02 խմբի, 01 դասի «1213. Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի «11021. Սննդամթերքի անվտանգության ոլորտում տեսչական վերահսկողության շրջանակներում լաբորատոր փորձարկումներ» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Վճարողը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով Կատարողին հատկացնել Որոշմամբ նախատեսված **553 916 100** ***(հինգ հարյուր հիսուներեք միլիոն ինը հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ*** (ներառյալ Ավելացված արժեքի հարկը)՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան ամսական համամասնություններով՝

համաձայն N 3 հավելվածի, իսկ Կատարողը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կատարողի կողմից իրականացվելիք Ծրագրով նախատեսված միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից իրականացվող Ծրագրի ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կատարողից պահանջելու վճարել Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը,

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց Վճարողի կողմից գումար վճարելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, իսկ գումարը փոխանցված լինելու դեպքում նաև պահանջելու Վճարողին հետ վերադարձնել փոխանցված գումարը, եթե՝

ա. Կատարողը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.4. Պայմանագիրն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները,

2.1.5. Կատարողից պահանջել ներկայացնելու Ծրագրի կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը և տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 1-ը, ինչպես նաև հաշվետվություն դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող

ամսվա 20-ը: Ներկայացվող հաշվետվությունների համար ուղեցույց են հանդիսանում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված Հ-2, Հ-4 և Հ-8 ձևերը:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Վճարողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կատարողին,

2.3.2. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.3. իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել՝ դրանք ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Վճարողի կողմից տրամադրված գումարների՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3. կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուին, վերջինս էլ՝ Վճարողին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Վճարողի և Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. Պատվիրատուի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կատարողը պարտավորվում է անվճար՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին, վերջինս էլ՝ Վճարողին ներկայացնել տեղեկություններ Պայմանագրի շրջանակներում հաշվարկված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված ավելացված արժեքի հարկի գումարների վերաբերյալ, Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների, և չօգտագործված գումարները ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.9. Պայմանագրով նախատեսված Միջոցառումների տարեկան արդյունքները Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո՝ Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները/ վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ (հավելված N 4):

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

3.2. Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում

ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

3.3. Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կատարողը յուրաքանչյուր ամսվա համար, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը, դուրս է գրում հարկային հաշիվ և տրամադրում է հանձնման-ընդունման ակտ կատարված աշխատանքների համար: Հարկային հաշվի գումարը, սույն Պայմանագրով սահմանված դրամաշնորհի գումարի հաշվին, հաշվարկվում է Կատարողի տվյալ ամսվա փաստացի (հաշվեգրված) կատարված ծախսերի չափով: Տարեկան կտրվածքով հարկային հաշիվների հանրագումարը չի կարող գերազանցել 1.1 կետում նշված գումարը:

4.2. Կատարողին վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, յուրաքանչյուր ամիս՝ 1.1 կետով սահմանված համամասնությամբ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Վճարողի և Պատվիրատուի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծրագրի իրականացման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

6.2. Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև Պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև Պայմանագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը

իրականացվում է այդ Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրի համար 1-ից 4-րդ հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

8.2. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է իր պաշտոնական՝ snund.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.4. Պայմանագիրը կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող	Վճարող
ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք. Երևան, 0010 Հանրապետության Հրապարակ Կառավարական տուն 1
Հասցե՝ ք. Երևան, 0051, Կոմիտասի պող. 49/2	Հասցե՝ ք. Երևան, 0041, Էրեբունի 12	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011062180 ՀՎՀՀ 02505554
ՀՎՀՀ 00454227	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018006149 ՀՎՀՀ 00403436	
Ղեկավար՝ **ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**	Տնօրենի պ/կ՝ **ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**	Աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ **ԱՐՄԵՆԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

Հա

2026 թվականի ----------

կնքված N ԴՄ- պա

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	Անվանումը	Նկարագիրը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	Պահ գուն (ՀՀ
		Վաճառքում գտնվող սննդամթերքի անվտանգության և որակի բարելավման ապահովում (նմուշների լաբորատոր փորձաքննություն՝ հավատարմագրված լաբորատորիայի կողմից)	Նախատեսվում է իրականացնել լաբորատոր փորձաքննություններ սննդամթերքի **1665** նմուշների նկատմամբ	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է ՀՀ ՍԱՏՄ կողմից իրականացվող վերահսկողության ուժեղացման շրջանակներում նախորդ տարիների համեմատ կատարել շուկայահանված սննդամթերքի ավելի լայն տեսակների լաբորատոր փորձաքննություններ և ավելի հաճախ դարձնել վերջիններիս պարբերականությունը՝ բացահայտելով անհայտ ծագման, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով չուղեկցվող, կասկածելի որակ ունեցող և նույնականացում պահանջող սննդամթերքի առկայության փաստերը և կանխել դրանց իրացումը			
				Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է ստուգման ենթակա նմուշների մանրէաբանական ցուցանիշների նկատմամբ փորձարկումներն իրականացնել միջինում 7 օր տևողությամբ			
				Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է ստուգման ենթակա պահածոյացված նմուշների մանրէաբանական ցուցանիշների նկատմամբ փորձարկումներն իրականացնել միջինում 14 օր տևողությամբ			
		Գյուղատնտեսական կենդանիներից (հիմնականում խոշոր և մանր եղջերավոր), ինչպես նաև կենդանական ծագման հումքից և նյութերից վերցված նմուշների լաբորատոր փորձարկումների իրականացում	Նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական կենդանիներից վերցված արյան, ինչպես նաև այլ կենդանիների, կենդանական ծագման հումքի և նյութի նմուշների մանրէաբանական, քիմիաթունաբանական, շիճուկաբանական թվով **995000** լաբորատոր հետազոտություններ և ախտաբանաանատոմիական ուսումնասիրություններ	Ծրագրի իրագործումից ակնկալվում է 1. Գյուղատնտեսական և ջրային կենդանիների հիվանդություններից զերծ գլխաքանակի առկայության ապահովում, 2. Գյուղատնտեսական և ջրային կենդանիների մի շարք վարակիչ հիվանդությունների ախտորոշման հավաստիության 95-98%-ի ապահովում, 3. Որոշ էնդեմիկ վարակիչ հիվանդությունների նկատմամբ լաբորատոր ստուգում անցած անասնագլխաքանակի, կենդանական ծագման հումքի և նյութի առկայության ապահովում			
		Մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճահետազոտության լաբորատոր փորձարկումներ	Նախատեսվում է իրականացնել մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճահետազոտության լաբորատոր փորձարկումներ թվով **4277** արյան նմուշների նկատմամբ	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է մանր եղջերավոր կենդանիների ժանտախտի նկատմամբ կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովում և ԿԱՀԿ պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը ՄԵԿԺ հիվանդությունից զերծ երկիր ճանաչելու գործընթացում կարևորագույն նախապայմանի իրականացում:			

1	Սննդամթերքի անվտանգության ոլորտում տեսչական վերահսկողության շրջանակներում լաբորատոր փորձարկումներ	Կենդանիների արյան նմուշների հետպատվաստումային վարակամերժության արդյունավետության աստիճանի որոշման լաբորատոր փորձարկումներ	Նախատեսվում է իրականացնել լաբորատոր փորձարկումներ խոշոր եղջերավոր կենդանիներից վերցված թվով **2325** արյան նմուշների նկատմամբ	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է իրականացնել դաբաղ հիվանդության դեմ պատվաստումների որակի և շճաբանական հետազոտությունների վրա հիմնված հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի լիարժեք գնահատում՝ ապահովելով ՀՀ-ում մանր և խոշոր եղջերավոր կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ վարակամերժության մինչև 97%-ոց արդյունք	31.12.2026թ.	Եռամսյակային հաշվետվությունները՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, տարեկան ամփոփ հաշվետվությունը՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 1-ը ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ հաշվետվությունը՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը	553,
			Նախատեսվում է իրականացնել լաբորատոր փորձարկումներ մանր եղջերավոր կենդանիներից վերցված թվով **2075** արյան նմուշների նկատմամբ				
			Նախատեսվում է լաբորատոր փորձարկումների միջոցով նպաստել Հայաստանի Հանրապետությունում դաբաղ հիվանդության անասնահամաճարակային իրավիճակի կայունացմանը	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում դաբաղ հիվանդության անասնահամաճարակային իրավիճակի 90 տոկոսով կայունացման ապահովում՝ լաբորատոր փորձարկումների վերաբերյալ տվյալների փոխանցման միջոցով			
		Բույսերի կարանտին օրգանիզմների հիվանդությունների, վնասատուների նկատմամբ վերահսկողության սահմանում, թունաքիմիկատների բացասական ազդեցության վերահսկում՝ ինչպես բույսերի, այնպես էլ մարդկանց առողջության վրա	Նախատեսվում է իրականացնել բույսերի և մշակաբույսերի փորձանմուշների լաբորատոր հետազոտություններ առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով, ՀՀ տարածքում գործող վաճառքի կետերում իրացվող թունանյութերի ազդող նյութի որոշման թվով **6500** լաբորատոր փորձաքննություններ	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման, ՀՀ-ում վաճառքի կետերից վերցված թունանյութերի նմուշներում ազդող նյութերի որոշման հավաստիության 90-95%-ի ապահովում			
			Նախատեսվում է լաբորատոր փորձարկումների միջոցով նպաստել ՀՀ-ում կայուն բուսասանիտարական իրավիճակին	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է ՀՀ-ում կայուն բուսասանիտարական իրավիճակին նպաստում 50 տոկոսով՝ լաբորատոր փորձարկումների վերաբերյալ տվյալների փոխանցման միջոցով			
			Նախատեսվում է լաբորատոր փորձարկումների միջոցով նպաստել ՀՀ-ում իրացվող անորակ պեստիցիդների հայտնաբերման և իրացման կանխարգելմանը	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է ՀՀ-ում իրացվող անորակ պեստիցիդների հայտնաբերմանը և իրացման կանխարգելմանը նպաստում 80 տոկոսով՝ լաբորատոր փորձարկումների վերաբերյալ տվյալների փոխանցման միջոցով			
		Լաբորատոր փորձարկումների միջոցով ձկան, մեղրի և կաթի մեջ մնացորդային նյութերի չափաքանակների բացահայտում, որի արդյունքում որոշվում է այդ մթերքների անվտանգության և որակի մակարդակը	Կաթի մեջ մնացորդային նյութերի և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների լաբորատոր հսկողության նպատակով իրականացվող մոնիթորինգի շրջանակներում նախատեսվում է իրականացնել կաթի **300** նմուշներով **1200 հատ** լաբորատոր հետազոտություններ	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է հնարավորինս լիարժեք վերահսկողության ապահովում ձկան ,մեղրի և կաթի մեջ մնացորդային նյութերի նկատմամբ, որը կբացահայտի և կհավաստի, որ նշված կենդանական ծագում ունեցող մթերքները պարունակում կամ չեն պարունակում արգելված նյութեր կամ հայտնաբերված նյութերի պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված առավելագույն թույլատրելի մնացորդային քանակների սահմանաչափերը: Արդյունքում, ակնկալվում է ապահովել շրջանառվող սննդամթերքի համապատասխանությունը սննդամթերքի անվտանգության բնագավառը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին			
			Նախատեսվում է փորձարկման ենթակա ձկան **150** նմուշներով իրականացնել մնացորդային նյութերի լաբորատոր հսկողության **792** հատ հետազոտություն				
			Նախատեսվում է փորձարկման ենթակա մեղրի **130** նմուշներով իրականացնել մնացորդային նյութերի լաբորատոր հսկողության **863** հատ հետազոտություն				

			Նախատեսվում է լաբորատոր փորձարկումների արդյունքների փոխանցման միջոցով նպաստել մեղրի մեջ մնացորդային նյութերի քանակության վերահսկողությանը	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է մեղրի մեջ մնացորդային նյութերի քանակության վերահսկողությանը նպաստում 50 տոկոսով՝ լաբորատոր փորձարկումների վերաբերյալ տվյալների փոխանցման միջոցով		
			Նախատեսվում է լաբորատոր փորձարկումների արդյունքների փոխանցման միջոցով նպաստել ձկան մեջ մնացորդային նյութերի քանակության վերահսկողությանը	Ծրագրի լիարժեք իրագործումից ակնկալվում է ձկան մեջ մնացորդային նյութերի քանակության վերահսկողությանը նպաստում 50 տոկոսով՝ լաբորատոր փորձարկումների վերաբերյալ տվյալների փոխանցման միջոցով		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
Հասցե՝ ք. Երևան, 0051,
Կոմիտասի պող. 49/2

ՀՎՀՀ 00454227

Ղեկավար՝
ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(ստորագրություն)

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն»ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, 0041, Էրեբունի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018006149
ՀՎՀՀ 00403436

Տնօրենի ժ/կ՝
ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

(ստորագրություն)

Կ. Տ.

ՎՃԱՐՈՂ

Վարչապետի աշխատակազմ
Հասցե՝ ք. Երևան, 0010,
Հանրապետության Հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011062180
ՀՎՀՀ 02505554

Աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝
ԱՐՄԵՆԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 2

2026 թվականի ---------- --- -ին

կնքված N ԴՄ- պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N _____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հավելված N 3

վիճակագրական տեղեկատվություն -ՌՆ N ջրհեղեղ

2026 թվականի ---------- -ին

ԿԱՐՄՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՑԱՆԿ*

/դրամ/ /<< դրամ/

Հրավերով նախատեսված փոքրածավալ գնումներ	Ընդամենը	Մինչև տարեսկզբի գնումներ											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	**553,916,100**		73,855,400	110,783,200	151,403,700	192,024,300	232,644,800	278,804,400	324,964,100	371,123,800	432,054,500	492,985,300	553,916,100

Ընդամենը գնումների ծավալը	Բացակայող գնումների ամսաթիվը	Գնումների ընդհանուր ծավալի 20%-ի չափով գնումներ կատարելու դեպքում գնումների ամսաթիվը	Ընտրված գնահատողական չափանիշը	Գնումների նախնական ծրագրի համաձայն գնումների ամսաթիվը	Գնումների ընդհանուր ծավալի 20%-ի չափով գնումներ կատարելու դեպքում գնումների ամսաթիվը	Ընտրված գնահատողական չափանիշը
	4637-ԸՆԹՍՀԿ	հունվարի 15	Ամենաշատ միավորներ հավաքած հայտատու	հունվարի 15	հունվարի 15	Ամենաշատ միավորներ հավաքած հայտատու

*Գնումը կարող է կատարվել միայն նշված գումարի սահմանի դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՆՆԴԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ տնտեսության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, 0051, Կոմիտասի պող. 49/2
ՀՀՀ 00454228

ՎԱՍՏԱԿԱԳԻՐ

Տնօրեն՝ Ս.Ս. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՆՆԴԱՅԻՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
«Հանրապետական վետերինարա-սանիտարական և դեղամիջոցների լաբորատորիա» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, 0041, Էրեբունի 12
Հ/Հ 900018006149
ՀՀՀ 00403436

ՆԱԽՈՏՈՒ

Տնօրեն՝ Ս.Ս. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
«Հանրապետական սննդամթերքի անվտանգության կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0010, Կոմիտասի պող. 1 տուն
Հ/Հ 900011062180
ՀՀՀ 02505554

ՆԱԽՈՏՈՒ

Կենտրոնի տնօրեն՝ Ս.Ս. Ասատրյան

Հավելված N 4
2026 թվականի ---------- --- -ին
կնքված N ԴՄ- պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
ՀՀ _____	ՀՀ_____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն ակտի երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.